ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2023թվականի N 51-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.N 731-Ն, 05.01.2022թ. N 13-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության մառանը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով ԱՁ «Սարգիս Թամազյան Ռոբերտի»-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, Արարատ Վանյայի Սարուխանյանի կողմից լիազորված անձ /լիազորագիր՝ N 4594 տրվ. 25.11.2022թ./ Սուրեն Սեյրանի Հովսեփյանի /մուտք՝ 20.02.2023թ. թիվ 76/ դիմումը և առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0015-0021 ծածկագրի և 06-004-0015-0001 ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 0.0092 հա մակերեսով հողամասում Արարատ Վանյայի Սարուխանյանի կողմից 1989թ.ինքնակամ կառուցված 21,53 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերեսը՝ 17.50քմ/ մառանը ճանաչել համայնքային սեփականություն:

2. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ ք.Թումանյան,Կենտրոնական փողոցի հարակից տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 0.0092 հա մակերեսով հողամասում Արարատ Վանյայի Սարուխանյանի կողմից ինքնակամ կառուցված 21,53 քմ արտաքին մակերեսով մառանը ճանաչել օրինական:
3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի հակասում քաղաքաշինական նորմերին և համայնքի գլխավոր հատակագծի պահանջներին,այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Ինքնակամ կառույցի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված, այն դասելով բնակավայրերի հողամասերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում ու համայնքի հողային հաշվեկշռում:
5. Օրինական ճանաչված մառանին տրամադրել նոր փոստային՝ << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան, Կենտրոնական փողոց, թիվ 4/2 մառան>> հասցեն:
6.Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ռ.Թորոսյանին՝ սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված մառանի նկատմամբ Թումանյան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
7. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո ներկայացնել գրավոր առաջարկություն սույն որոշման 1-ին կետում նշված կառույցն իրականացրած Արարատ Վանյայի Սարուխանյանին գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. մարտի 06
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՐՏԻ 2023թվականի N 52-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌԱՖԱՅԵԼ ԳԱՌՆԻԿԻ ՊԱՐԱՆՅԱՆԻՆ,ՍԻՐՎԱՐԴ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ,ՍՊԱՐՏԱԿ ՌԱՖԱՅԵԼԻ ՊԱՐԱՆՅԱՆԻՆ, ԱՆԻ ՌԱՖԱՅԵԼԻ ՊԱՐԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՀԵ ՌԱՖԱՅԵԼԻ ՊԱՐԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ՄԱՌԱՆԻ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՋՐԱՎԱԶԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ՄԱՌԱՆԻ, ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՋՐԱՎԱԶԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ 50-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով և քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, դրանում առկա շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, հաշվի առնելով 30.06.2004թվականին հաստատված ՀՀ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17022023-06-0056 վկայականը, դրա համար հինք հանդիսացած թիվ 1326196 սեփականության իրավունքի վկայականը և այն հանգամանքը, որ Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզում և սեփականության իրավունքի թիվ 1326196 վկայականում արտացոլված է 06-004-023-0049 ծածկագրով հողամասում գտնվող բնակելի տունը, ավտոտնակը, մառանը և ջրավազանը՝

Որոշում եմ.

1.Հաստատել Ռաֆայել Գառնիկի Պարանյանին, Սիրվարդ Համազասպի Հակոբյանին,Սպարտակ Ռաֆայելի Պարանյանին,Անի Ռաֆայելի Պարանյանին,Վահե Ռաֆայելի Պարանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-004-0023-0049 ծածկագրով հողամասի սահմանները համաձայն <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագծի, որի չափը կազմում է 0,14711 հա:

2.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին հոդվածի ուժով վերականգնել, օրինականացնել և ճանաչել Ռաֆայել Գառնիկի Պարանյանի, Սիրվարդ Համազասպի Հակոբյանի, Սպարտակ Ռաֆայելի Պարանյանի, Անի Ռաֆայելի Պարանյանի և Վահե Ռաֆայելի Պարանյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, սեփականության իրավունքով իրենց պատկանող 06-004-0023-0049 ծածկագրով հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ 1960 թվականին կառուցված 116,4 քմ ներքին մակերեսով բնակելի տան, 44,6քմ ներքին մակերեսով բնակելի տան բ/պ, 7,3 քմ ներքին մակերեսով մառանի, 19,5 քմ ներքին մակերեսով ավտոտնակի և 8,1քմ ներքին մակերեսով ջրավազանի նկատմամբ:

3. Անշարժ գույքին տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան, 11-րդ փողոց, թիվ 9 բնակելի տուն>> փոստային հասցեն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. մարտի 10
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2023թվականի N 53-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Մարց գյուղի բնակիչ Ժան Սպարտակի Գևորգյանի դիմումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,տրված 07.03.2023թ. գրանցամատյանի գրանցում N 749 և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Ժան Սպարտակի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, գյուղ Մարց (ծած.06-071-020-000028) բնակելի տանը, մակերեսի չափը՝ 162,9 քմ և բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,23 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Մարց, 5-րդ փողոց,8-րդ փակուղի, 20 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. մարտի 10
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2023թվականի N 54-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Մարց գյուղի բնակիչ Ժան Սպարտակի Գևորգյանի դիմումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,տրված 07.03.2023թ.գրանցամատյանի գրանցում N 749 և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Ժան Սպարտակի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, գյուղ Մարց (ծած.06-071-017-000005) բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,163 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Մարց, 5-րդ փողոց, 8-րդ փակուղի, 15/5 հողամաս>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23թ. մարտի 10
ք.Թումանյան